



ՊՐՈՖ. Լ. ՍԵՄՅՈՆՈՎ

ԶԱՏԿԻ ՏՈՆԻ ՏՈՄԱՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ



յուսիս-արևելյան ժողովուրդների մոտ (Անդրկովկասում, Առաջավոր Ասիայում և միջերկրական-յան երկրների մի մասում), դեռ հազարամյակներ առաջ սովորություն էր դարձել նոր տարվա սկիզբը կատարել գարնանային գիշերահավասարի օրը, երբ արթնանում էր բնությունը, ծաղիկներով ծածկվում էին հովիտներն ու սարերը և սկսվում էին դաշտային երկրագործական աշխատանքները: Դա մի տոն էր՝ սերտ կապված բնության հետ:

Քրիստոնեությունը մուտք գործելով այդ երկրները, աշխատեց հարմարեցնել գարնանային գիշերահավասարի օրվա հետ իր կարևոր տոներից մեկը՝ Զատիկը (Քրիստոսի Հարությունը), որը և առանձին դժգոհությունների տեղիք չտվեց:

325 թվականին Նիկիա քաղաքում տեղի ունեցավ նոր կազմակերպված և արդեն դադարապետ հիմք ստացած Քրիստոնեական եկեղեցու ժողով: Այդ ժողովում հիմնական հարցերից մեկը դարձավ Զատիկի տոնի կատարման ժամկետի հարցը, քանի որ քրիստոնեական մնացած տոները սերտ կերպով կապված են եղել այդ ժամկետի հետ:

Ժողովը ընդունեց, որ Զատիկի տոնը պիտի կատարել գարնանային լիալուսնի հաջորդ կիրակի օրը: Գարնանային լիալուսնի համարվում է այն լիալուսնի փուլը, որը տեղի է ունենում գարնանային գիշերահավասարի օրից, այսինքն մարտի 21—22-ից հետո: Նկատի ունենալով, որ եբրայեցիների Զատիկը լինում է ճիշտ գարնանային լիալուսնի օրը և ցանկանալով խուսափել քրիստոնեական և եբրայական Զատիկների համընկնումից, այդ ժողովը խստիվ պահանջ դրեց քրիստոնեական Զատիկը կատարել լիալուսնի հաջորդ կիրակի օրը, իսկ եթե կիրակին և լիալուսինը իրար հետ համընկնե-

լիս լինեին, ապա քրիստոնեական Զատիկը պիտի կատարվեր մեկ շաբաթ հետո — մյուս կիրակի օրը:

Այդ որոշումից հետո, նոր կազմակերպված Քրիստոնեական եկեղեցին պահանջ դրեց կարգի բերել ժամանակի հաշվման եղանակները, այլ խոսքով ասած՝ օրացույցները կամ տոմարը: Պահանջվում էր պարզ կերպով կարողանալ հաշվել՝ ա) լուսնի փուլը և բ) կիրակի օրերի ցուցակը տվյալ տարվա համար: Առաջին հարցն իր լուծումը ստացել էր վաղուց, բաբելական դիտնականների աշխատությունների շնորհիվ:

Ամենապարզ եղանակն էր այսպես կոչված լուսնի 19-ամյա շրջանը, որից հետո (19 տարուց հետո) լուսնի փուլերը կրկնվում են համարյա թե նույն հաջորդականությամբ — մոտ 1 — 2 ժամվա տարբերությամբ — և այդ ժամանակաշրջանի վրա հիմնավորված է վերադիրների աղյուսակը: Թեև ժամանակի ընթացքում այդ վերադիրների աղյուսակը ենթարկվել է որոշ փոփոխությունների, բայց և այնպես նա գործածության մեջ է եղել ինչպես հնում, այնպես և 20-րդ դարում և վերադիրների աղյուսակը հնարավորություն է տալիս, մինչև անգամ անգրագետ մարդկանց, համարյա թե առանց սխալի, հաշվել լուսնի օրը կամ փուլը: Հետևապես, հարցի առաջին մասը՝ գարնանային լիալուսնի օրը որոշելու հարցը արդեն լուծված էր:

Գարնանային լիալուսնիների աղյուսակ կազմելու աշխատանքն իր վրա վերցրեց Անդրեաս Բյուզանդացին, որը 353 թվականին ներկայացրեց առաջիկա 200 տարիների համար պատրաստված աղյուսակ: Տոմարագետներից ոմանք կարծում են, որ Անդրեաս Բյուզանդացին կատարել է մի ինչ որ տոմարական բարդ հաշիվ, տվել է ինքնուրույն մի նոր բան, մի նոր աղյուսակ լուսնի փուլերի համար: Սակայն մենք այդ կարծիքին համամիտ չենք: Մենք գտնում ենք,

որ Անդրեաս Բյուզանդացին վերցրել է $19 \times 10 + 10 = 200$, այսինքն տասը 19-ամյա լուսնի փուլերի կրկնումը և դրա վրա ավելացրել 10 տարի ու ստացել զարնանային լիալուսինների 200-ամյա աղյուսակ: Մեր ուսումնասիրությունները բերել են մեզ այն համոզման, որ նա վարվել է հետևյալ կերպ:— Ընդունելով Նիկիայի ժողովի տարին՝ 325 թվականը որպես 19-ամյակի սկիզբ, նա դրա վրա ավելացրել է մի 19-ամյա շրջան, ներառյալ մինչև 343 թվականը և երկրորդ 19-ամյակը սկսել էր արդեն 344 թվականից և այդպես՝ մինչև 353 թվականը: Այդ երկրորդ 19-ամյակից արդեն անցած է եղել 9 տարի և մնացել է 10 տարի: Այդ մնացած 10 տարվա վրա նա ավելացրել է տասը 19-ամյակ ու ստացել է 200-ամյակի աղյուսակներ մինչև 553 թվականը: Նրա աշխատանքի թերի կողմն եղել է այն, որ նրա աղյուսակը վերջանալուց հետո, օգտվել նորից նրանով՝ անհնարին է, քանի որ 200-ամյա աղյուսակը սկսվելիս է եղել ոչ թե 19-ամյա շրջանի առաջին տարվանից, այլ միայն 10-րդ: Մեր ասածի ապացուցման վրա կանգ չենք առնում՝ հորդածը չբարդացնելու նպատակով: Այդ հանգամանքն, իհարկե, պիտի հանդես գար 200 տարուց հետո և իրապես 553 թվականից սկսած, «Ակսան շփոթիլ տօնը և ամենայն արուեստը տոմարական»,— ինչպես նշում է Կիրակոս Գանձակեցի պատմիչը: Այդ մասին խոսում են նաև Սամվել Անեցին, Հովհաննես Սարկավազը, Մխիթար Այրիվանեցին և Հակոբ Ղրիմեցին: Բերում ենք մի հատված միայն Սամվել Անեցուց:

«Աստանոր լցեալ յինին ամբ ի ծննդն էն Բրիստոսի ՇԾԳ, յորում և բովանդակեցան կանոնը Մ-եկին Անդրիասայ, զորոյ զկնի կարգեցաւ թուականս Հայոց այսպիսի պատճառաւ. ի լրման Մ-եկին լրումն Զատկին, ի մարտի ին էր: Եւ ի սկզբանն՝ յապրիլի Դ: Եւ վասն զի ոչ ի սկիզբն կարացին զնալ, զի լետ ին-ին մարտի ԺԳ էր ապրիլ և Թ լըրմունք ի մէջ. այնր աղաբաւ սկսան շփոթիլ տօնը ամենայն...» (էջ 74):

Այդ դարերում Զատիկի ժամկետի ճիշտ հաշվելը ամենակարեւոր խնդիրներից էր, հետևաբար քրիստոնյա ժողովուրդներն անտարբեր վերաբերվել չէին կարող: Եվ մենք տեսնում ենք, որ առաջացած սխալն ուղղելու համար ձեռք են առնվում ամենակտրոսկ միջոցառումներ— գործը կանոնավոր հիմքերի վրա դնելու համար հրավիրվում է 36 լուրջ ու գիտնական մարդկանցից բաղկացած մի հանձնաժողով: Բերում ենք ականավոր հայ գիտնական Հովհաննես Սարկավազի աշխատությունից այդ առթիվ մի կտոր, Հայկական

ՍՍՌ Պետական մատենադարանի № 1495 ձեռագրից.

«Ժողովեցան յԱղեքսանդրիայ ի մայրաքաղաքն Նզիպտացոց՝ արքանունիք և իմաստասէրք յունաց և յասորոց, ի հռոմայեցոց, յեգիպտացոց, թուով ԼԵ և առաքեն յերուսաղէմ և կոչեն յինքեանս զՓենեհեզ՝ որ ազգաւ եբրայեցի էր և հաւատով քրիստոնեայ և լինին ԼԶ: Եւ գլուխ իմաստասիրացն և առաջնորդն՝ էաս, որ բուն ազգաւ աղեքսանդրացի էր և հաւատով քրիստոնեայ: Կարգեցին և հաստատեցին բոլորակ ԵԼԲ ամաց, որ կոչի Ե-եկ: Եւ գլուխ բոլորին հաստատեցին զԴ ապրիլի ամսոյ: Եւ ունի յինքեան բոլորակն զընթաց ԻԸ որ կոչին և նահանջից նահանջ: Եւ զընթացս լուսնոյ՝ որ ԹԺ-եակ կոչին»:

Ժողովը, ինչպես տեսնում ենք, կազմված էր լուրջ և գիտուն մարդկանցից, համարյա թե բոլոր շահագրգռված երկրների ներկայացուցիչներից: Այդ ժողովը, նկատի ունենալով վերևում նշած երկու հանգամանքները, նպատակահամար գտավ ընդունել այնպիսի մի ժամանակաշրջան, որն ընդգրկեր երկու ժամանակաշրջանի տարբերությունները՝ ա) լուսնի փուլերի կրկնվելու և բ) կիրակի օրերի կրկնվելու տարբերությունները: Առաջին ժամանակի տարբերությունը, ինչպես ասել ենք մի քանի անգամ, հավասար է 19 տարվա, իսկ երկրորդ ժամանակի տարբերությունը կազմում է ճիշտ 28 տարի: 28 տարուց հետո օրացույցը նորից վերականգնվում է, այսինքն շաբաթվա օրերն ու ամսաթիվները նորից համընկնում են: Օրինակ, 1953 թվականի օրացույցն առանց փոփոխելու կարող ենք օգտագործել և 1981 թվականին և 2009 թվականին և այլն, ինչպես նաև 1925 թվականին և այլն: Այդպիսի մեծ ժամանակի պարբերությունը նրանք համարեցին $28 \times 19 = 532$ տարվա ժամանակամիջոցը, որը կոչվում է մեծ ինդիկտոն: Այժմ բավական էր մեկ անգամ կատարել բոլոր հաշիվները 532 տարվա ժամանակաշրջանի համար և դրանից հետո նորից հաշիվը սկսել 532 տարվա ժամանակաշրջանի առաջին տարուց մինչև վերջ: Հայկական իրականության մեջ, առաջին այդ 532 տարվա ժամանակաշրջանը գործ էածվել 552-ից մինչև 1083 թվականը ներառյալ, երկրորդը համարվել է 1084-ից մինչև 1615 ներառյալ, երրորդը՝ սկսած 1616 թվականից: Բայց գործն այնպես հարթ չի ընթացել: Այս մասին մանրամասնորեն կանգ է առել Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը իր «Ազգապատում» աշխատությունում: Բերում ենք նրա եզրակացությունը.

«Աղեքսանդրիոյ էասեան շրջանին կազմութիւնը կայսեր ներկայացուցելուն

վրայ, բիւզանդական հայրապետութիւնն ալ զբաղեցաւ նման խնդիրով, և իր գիտուններուն խումբը Իոհոն Բիւզանդացոյ նախագահութեամբ որշափ ալ ընդունեցան 532 տարիներու շրջանը, բայց լուսնոյ լրումներուն հաշուոյն մէջ շորս տեղ մանր տարբերութիւն մը մոռցնց, որով լուսնոյ լրումը փոխանակ կիրակիին սկիզբը իյնալու, շաբաթ օրուան վերջը կը մնար, և այնպէս հնար կ'ըլլար հաջորդ կիրակի օրը Զատիկ տօնել, և ոչ 7 օր յետաձգել, ինչպէս ըրած էր էասեան հաշիւը: Շրջանին այս շորս տարիներն են «Մուսաւտիկ» կոչուածները, յորս էասեան Զատիկը ապրիլ 13-ին նշանակուած էր, իսկ Իոհոնեանը ապրիլ 6-ին, որուն համար ալ ըսուած է, թէ Իոհոն պատառեաց զկանոն Զատիկին...»:

Տվյալ խնդրի վերաբերյալ հեղինակը միանգամայն ճիշտ մոտեցում ունի: Իրապես, Իոհոնի խմբի աշխատանքում, 532 տարվա ժամանակաշրջանում, շորս անգամ այդ սխալը կատարված է եղել: Գարնանային լիալուսինը տեղի է ունենում կիրակի օրվա սկզբին, այսինքն գիշերվա ժամը 12-ից հետո, սակայն թեև ըստ նիկիո ժողովի Զատիկը պիտի կատարվեր 7 օր հետո՝ հաջորդ կիրակի օրը, Իոհոնը նպատակահարմար է գտել նշանակելու նույն կիրակի օրն առանց հետաձգելու: Այլ կերպ ասած, նա հնարավորություն է ստեղծել երբայական և քրիստոնեական Զատիկների համընկնմանը: Ահա թե ինչո՞ւ հայերի կողմից դա անվանել են «Մուսաւտիկ»: Պիտի ասել, որ Հայ Եկեղեցին իր 3-րդ ժողովում, որը տեղի ունեցավ Դվին քաղաքում 584 թվականին, առաջնապատվությունը տվեց էասի աղյուսակներին և միանգամայն հրաժարվեց Իոհոնի 532-ամյա աղյուսակներից:

Սակայն այստեղ կար և մի ուրիշ հանգամանք, որը շատերը աչքաթող են անում. հայերը, ինչպես և արևելյան շատ ժողովուրդներ, այդ ժամանակաշրջանում օրվա վերջ համարում էին արևամուտը, այսինքն արևը մայր մտնելուց հետո արդեն սկսվում էր նոր օրը: Օրինակ, եթե շաբաթ օրը մինչև արևի մայր մտնելը համարվում էր շաբաթ օր, ապա արևը մայր մտնելուց հետո այն ժամանակամիջոցը, որը մենք հիմա համարում ենք շաբաթ օրվա երեկո, ըստ նրանց հաշվին արդեն կիրակի օրվա սկիզբն էր և, հետևապես, եթե գարնանային լիալուսինը տեղի ունենա մեր ժամանակակից հաշվով շաբաթ օրը երեկոյան ժամը 8—9-ին, համարվում էր

թե այդ տեղի է ունեցել կիրակի օրը: Պարզ է, որ նույն օրը Զատիկ տոնելն անհնարին էր հայ քրիստոնյաների համար, այն անպատճառ պիտի հետաձգվեր 7 օրով և տոնվեր հետևյալ կիրակի օրը:

Այստեղ վերհիշենք մի հանգամանք, որը մշտապես կատարվում էր նախառեղիցիոն Ռուսաստանում: Հայերը իրենց կրոնական ծեսերը, կապված Զատիկի տոնի հետ, սկսում էին կատարել շաբաթ օրը երեկոյան և արդեն վերջացրած էին լինում նույն օրը, երեկոյան ժամը 7—8-ին, իսկ հարևան քրիստոնյա ժողովուրդները նույն ծիսակատարությունները կատարում էին գիշերվա ժամը 12-ից հետո: Շատերը կարծում էին, որ այդտեղ դոյուլթյուն ունի տարակարծություն: Բայց ո՞չ մի տարակարծություն չկար, քանի որ հայերի համար շաբաթ օրը վերջանում էր արևը մայր մտնելուց հետո, իսկ մյուսների համար նույն շաբաթ օրը վերջանում էր գիշերվա ժամը 12-ին: Այնպես որ, թե՛ հայերը, ըստ շատ հին սովորության, և թե՛ մյուս քրիստոնյա ժողովուրդները ծիսակատարությունները կատարում էին, ըստ իրենց հաշվի, կիրակի օրվա սկզբին: Այստեղից էլ պարզ է՝ թե ինչո՞ւ համար եթե լիալուսինը տեղի ունենար կիրակի օրվա սկզբին՝ արդեն, ըստ կրոնական օրենքների, նույն օրը Զատիկ տոնել չէր կարելի: Պարզենք օրինակով. տեսնեք թե գարնանային լիալուսինը պատահեց կիրակի օրվա սկզբին, ենթադրենք՝ առավոտյան ժամը 3-ին: Բայց չէ՞ որ բոլոր ժողովուրդների մոտ Զատիկի հետ կապված կրոնական ծիսակատարությունները արդեն վերջացած կլինեն մինչև այդ, հետևաբար Զատիկը կատարվեց գարնանային լիալուսնից առաջ և դրանով կխախտվի Քրիստոնեական կրոնի հիմնական որոշումներից ամենազինավորը: Պարզ է, որ եթե մյուս ժողովուրդները առաջ ընկնեին 1—2 ժամով, ապա հայերը առաջ ընկած կլինեին մոտ 9—10 ժամով: Երբ Դվինի ժողովը քննում էր եղած 532-ամյա ժամանակաշրջաններից ո՞րն ընտրելու հարցը, նա առաջնապատվություն տվեց էասյանին, նկատի ունենալով, որ նա ավելի է համապատասխանում հայ ժողովրդի սովորություններին և նրա Եկեղեցու պահանջներին:

Չմոռանաք այստեղ հիշատակել, որ հայ ժողովուրդն ունեցել է շատ խոշոր և աչքի ընկնող տոմարագիտներ. ալդ հարդի վերաբերյալ Դվինի ժողովում զեկուցող է հանդիսացել 6-րդ դարի աչքի ընկնող տոմարագետ Անաստաս Տարոնեցին:

